ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 մարտի 2017 թվականի N 224 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Ռուսաստանի Դաշնության պետական կառավարման դաշնային մարմինների հետ կայանալիք հանդիպումներին մասնակցելու նպատակով 2017 թվականի մարտի 2-4-ը Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) մեկնած պատվիրակության անդամների՝ համաձայն հավելվածի, գործուղման հետ կապված ծախսերը կատարել.

Վարդան Արամյանինը, Սուրեն Կարայանինը, Դավիթ Անանյանինը և Արմեն Գևորգյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով արտաահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

2. Ընդունել ի գիտություն, որ Արթուր Բաղայանի՝ Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա) գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. մարտի 9
Երևան

224v.voroshum

Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
մարտի 9 -ի N 224 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-4-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Վ. Արամյան - ՀՀ ֆինանսների նախարար

Ս. Կարայան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար

Դ. Անանյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

Ա. Գևորգյան - ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

Ա. Բաղալյան - «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի գործադիր տնօրեն (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ